

Է. Վ. ԱՏՎԵԼԻՆ

ՃԱՐԱԵՐ

ՈՒԳՐԻՑԻ

VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԹԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀՐԱՏԱՐՈՒԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՒՆԱՏ. • 1939

3 / JAN 2018


Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացե՛ք

22603

Ի.Վ.ԱՍԱԼԻՆ

ՃԱՌԵՐ
ՌՍԴԲ(Բ)Կ
VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1917 թ. ՀՈԿԴԻՄԻ 26—ՈԳՈՍՏՈՒԻ 3 (ՈԳՈՍՏՈՒԻ 8—16)



ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ • 1939

ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՌՍԴԲ(Բ)Կ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Ոգոսոսոսի 9 (հուլիսի 27)

И. В. СТАЛИН
РЕЧИ НА VI СЪЕЗДЕ
РСДРП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939



11-283439

Նախքան Կենտկոմի վերջին 2 և կես ամսովա-
քաղաքական գործունեյության վերաբերյալ զե-
կուցմանն անցնելը, յես հարկավոր եմ համարուժ
նշել այն հիմնական փաստը, վորը վորոշել է
Կենտկոմի գործունեյությունը: Յես նկատի ունեմ
մեր հեղափոխության զարգացման փաստը, հեղա-
փոխություն, վորը հարց է դնում արտադրության
վերահսկողության ձևով տնտեսական հարաբերու-
թյունների բնագավառին միջամտելու մասին, հո-
գը գյուղացիների ձեռքը հանձնելու մասին, իշխա-
նությունը բուրժուազիայի ձեռքից Բ. և Զ. Դ.
Խորհուրդների ձեռքը հանձնելու մասին: Այդ բոլո-
րը վորոշում է մեր հեղափոխության խորը բնույ-
թը: Նա սկսել է սոցիալիստական, բանվորական
հեղափոխության բնույթ ընդունել: Այդ փաստի
ճնշման տակ բուրժուազիան սկսել է կաղմակերպ-
վել և յելույթի համար հարմար մոմենտի սպասել:
Այդպիսի մոմենտ նա համարում եր մեր ճակատում
նահանջելու մոմենտը կտմ, ավելի ճիշտ, նահանջի
մոմենտն ա'յն գեպօւմ, յեթե Դերմանիային հա-
ջողվի մեզ վրա հարձակվել:

Կենտկոմի գործունեյությունը մայիս ամսին
ընթանում եր յերեք ուղղությամբ:

Նախ, Բ. և Զ. Դես. Խ. վերընտրությունների

լողունդ եր տրված։ Կենտկոմը յելնում եր նրանից, վոր մեզ մոտ հեղափոխությունը զարդանում է խաղաղ ճանապարհով։

Հակառակորդներն իշխանություն զավթելու փորձ եյին վերագրում մեզ։ Դա զբարտություն ե մեր հասցեյին, —մենք այդպիսի դիտավորություններ չենք ունեցել։ Մենք ասում եյինք, վոր մեզ մոտ հնարավորություն կա Խորհուրդների վերընտրությունների մեջոցով Խորհուրդների գործունեյության ընույթը համաձայնեցնել լայն մասաների հարձակման հետ։ Մեզ համար պարզ եր, վոր բավական ե մի ձայնի գերակշռություն Բ. և Զ. Դ. Խորհրդում, և իշխանությունը պարտավորված կլինի այլ ուղիով ընթանալ։ Ուստի մայիս ամսին ամբողջ աշխատանքն ընթացել ե վերընտրությունների գրոշի տակ։ Վերջիվերջո մենք դրավեցինք բանվորական Փրակցիայի տեղերի մոտ կեսը և զինվորայինի՝ մոտ ¼-ը։

Մյուս կողմը — դա ագիտացիան ե ընդդեմ պատերազմի։ Մենք ոգտվեցինք ընկ. Ֆոր. Աղեղինկատմամբ կայացրած մահվան դատավճռից և բողոքի մի շարք միտինդներ կազմակերպեցինք ընդդեմ մահապատճի և ընդդեմ պատերազմի։ Զինվորների վերաբերմունքը գեղի մեզ միանդամից փոխվեց, նրանք հասկացան, վոր մենք Ռուսաստանի «թշնամիներ» չենք։

Կենտկոմի գործունեյության յերրորդ կողմը մայիս ամսին տեղի ունեցած մունիցիալ ընտրություններն են։ Կենտկոմը Պետրոգրադի Կոմիտեյի հետ միասին բոլոր ուժերը գործ գրեց, վորպեսզի մարտ տա ինչպիս կադետներին — հականեղափոխության հիմնական ուժին, — այնպես և մենչեւիկներին ու եւերներին, վորոնք կամա թե ակամա դնում եյին կադետների հետեւից։ Պետրոգրադում 800.000 քվե-

արկողներից մենք ստացանք բոլոր ձայների մոտ 20%-ը, ընդվորում Վիբորգի ուայնական գուման գրավեցինք ամբողջովին։ Կուսակցությանը հատուել ծառայություն մտառուցեցին զինվոր և նախավատի ընկերները։

Այսպիսով, մայիս ամիսն անցավ՝ 1) մունիցիպալ ընտրությունների, 2) պատերազմի գեմ ագիտացիայի և 3) Բ. և Զ. Դ. վերընտրությունների նշանաբանի տակ։

Հունիս ամիս։ Ռազմաճակատում հարձակում նախապատրաստելու վերաբերյալ լուրերը ջղայնացնում եյին զինվորներին։ Այդ կապակցությամբ յերեան յեկան մի ամբողջ շարք հրամաններ, վորոնք ի շիք եյին դարձնում զինվորների իրավունքները։ Այդ բոլորը մասսաներին ելեկտրականացնում եր։ Ամեն մի լուր վայրկենաբար տարածվում եր ամբողջ Պիտերում և հուզումներ առաջացնում բանվորների և առանձնապես զինվորների մեջ։ Լուրեր հարձակման մասին, Կերենսկու հրամանները՝ զինվորի իրավունքների նշանափոր զեկլարացիայով, Պետրոգրադի բեռնաթափումն «անպետք» տարրերից, ինչպես ասում եյին իշխանությունները, ընդվորում պարզ եր, վոր ուղում եյին Պետրոգրադն ազատել «անհանդիսա» տարրերից, ավելի ու ավելի պարզ ուրվագծված քայլայումը, — այդ ամենը ելեկտրականացնում և ջղայնացնում եր բանվորական բնակչությանը, գործարաններում ժողովներ եյին կազմակերպվում և մեզ շարունակ զանազան զորագնդեր ու գործարաններ առաջարկում եյին յելույթ կազմակերպել։ Հունիսի 5-ին յելույթ-ցույց եր յենթագրվում, բայց Կենտկոմը վորոշեց առայժմ յելույթի չձեռնարկել, այլ 7-ին հրամիրել ուայնների, Փարբիկաների, գործարանների ու զորագնդերի ներկայացուցիչների

ժողով և այնուղղորշել յելույթի հարցը։ Այդպիսի ժողով հրավիրվեց, — ներկա ելին մոտ 2000 մարդ։ Պարզվեց, վոր առանձնապես հոգվում են զինվորները։ Բանվորները յելույթի չեն ձգտում։ Զայների հսկայական մեծամասնությունը վորոշեց յելույթուննալ։ Հարց և գրվում այն մասին, թե ինչ անել, յեթե Խորհուրդների Համագումարը յելույթի դեմ արտահայտվի, այդ գեղգում կարելի՞ յե արդյոք վատահ լինել։ Հաջողության, արդյոք չե՞նք շափաղանցում մեր ուժերը։ Արտահայտվող ընկերների հսկայական մեծամասնությունը յենթադրում եր, թե վոչ մի ուժ չի կանգնեցնի յելույթը։ Դրանից հետո կենտկոմը վորոշեց իր վրա վերցնել խաղաղ ցույցի կազմակերպումը։ Զինվորների գրած այն հարցի առթիվ, թե չի՞ կարելի արդյոք յելույթուննալ զինված, կենտկոմը վորոշեց զինուով հանդես չպալ։ Զինվորները, սակայն, առում ելին, վոր անզեն հանդես դան անհնար ե, վոր զենքը հասարակության կողմից լինելիք եքցինենք դեմ միակ ունալ յերաշխիքն ե, վոր իրենք զինք կիշրցնեն միայն ինքնապաշտպանության համար։

Հունիսի 9-ին [22] կենտկոմը, Պետրովադի կոմիտեն և Զինվորական կազմակերպությունը միատեղ նիստ են գումարում։ Կենտկոմը հարց և զնում՝ նկատի ունենալով, վոր Խորհուրդների Համագումարը և «սոցիալատական» բոլոր կառակցությունները վորոշակի դեմ են դուրս դալիս մեր ցույցին, հարց դնել յելույթի հետաձգման մասին։ Բոլորը բացասարար են պատասխանում։

Հունիսի 9-ին, դիշերվա ժամը 12-ին, Խորհուրդների Համագումարը մի կոչ է բաց թողնում, վորտեղ իր ամբողջ բարոյական ուժերն ու Խորհուրդների Համագումարի ամբողջ հեղինակությունը մեր դեմ և ուղղում։ Կենտկոմը վորոշում ե՝

ցույցը հետաձգել, նկատի ունենալով, վոր Համագումարի մեծամասնությունը ցույցին դիմ ե և, բացի դրանից, հենց ինքը՝ Համագումարը հունիսի 18-ին [Հունիսի 1-ին] նշանակում ե ցույց, վորտեղ մասամբներին կհաջողվի յերևանքերելիրենց կամքը։ Բանվորներն ու զինվորները զպված անբավականությամբ են ընդունում կենտկոմի այդ վորոշումը, բայց նրանք այն կատարում են։ Բնորոշ ե, ընկերներ, վոր այդ որը՝ հունիսի 10-ին [23], առավոտյան, յերբ Համագումարից գնացած մի շարք հունարներ գործարաններում յելույթը ունենին «ցույց անելու փորձը լիկիլդացիայի յենթարկելու» համար, հսկայական մեծամասնությունը համաձայնում եր լսել միայն մեր Փրակցիայի հունտորներին։ Կենտկոմին հաջողվեց հանգստացնել զինվորներին ու բանվորներին, և դրանով ցուցադրվեցին մեր ուժն ու աղղեցությունը։

Խորհուրդների Համագումարը, ցույցը հունիսի 18-ին նշանակելով, վրա հետ միասին հայտարարեց, թե ցույցը տեղի յե ունենալու բարձրունակությունը ազատության դրոշի ներքո։ Պարզ եր, վոր Համագումարը վորոշել եր մարտ առաջ մեր կուսակցությանը։ Մենք ընդունեցինք մարտահրավիերը և սկսեցինք ամբողջ ուժերը պատրաստել գալիք ցույցի համար։ Ընկերները գիտեն, թե ինչպես անցավ հունիսի 18-ի ցույցը։ Նույնիսկ բուրժուական թերթերն ասում ելին, թե հսկայական մեծամասնությունը զնում եր բոլցեիկների առաջադրած լուզունգների ներքո։ Հիմնական լոզունգն եր՝ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»։ Ցույց արին 400.000 մարդուց վոչ պակաս։ Միայն յերեք փոքրիկ խմբեր—հունդը, կազակները և պղեխանովյանները —սիրտ արին դուրս բերել՝ «Վատահություն ժամանակավոր կառավարությանը» լոզունգը, բայց

նրանք ել զղջացին, վորովհետև նրանց ստիպեցին ծալել իրենց դրոշները: Խորհուրդների Համագումարն ակներևաբար համոզվեց, վոր մեր կուսակցության ուժն ու ազդեցությունը մեծ են: Բոլորի մեջ այն համոզումը կազմվեց, թե հունիսի 18-ի յույցը, վորն ավելի ազդու յեր, քան ապրիլի 21-ի յույցը, —իզուր չի անցնի: Յեվ իրոք, այն իզուր չպետք է անցներ: «Քեզ»-ն ասում եր, թե ամենայն հավանականությամբ, կառավարության կազմում լուրջ փոփոխություններ տեղի կունենան, վորովհետև և Խորհուրդների քաղաքականությանը մասսաները հավանություն չեն տալիս: Բայց հենց այդ որը ուղամաճակատում հարձակում սկսվեց, հաջող հարձակում, և այդ կապակցությամբ նեվսկու վրա սկսվեցին «սեերի» մանիֆեստացիաները: Բոլշևիկների բարոյական հաղթանակը զերոյի հավասարեցրին. զերոյի հավասարեցրին նաև այն հնարավոր գործնական հետևանքները, վորոնց մասին խոսում եյին և՝ «Քեզ»-ը, և՝ եսերների ու մենչեվիկների դեկավարող կուսակցությունների պաշտոնական ներկայացուցիչները:

Ժամանակավոր կառավարությունը մնաց իշխանության գլուխ: Հարձակման փաստը, ժամանակավոր կառավարության մասնակի հաջողությունները, զորքերը Պետրովդրադից հանելու վերաբերյալ մի ամբողջ շարք նախադեր անհրաժեշտ ներգործություն արին զինվորների վրա: Այդ փաստերի վրանրանք համոզվեցին, վոր պասսիվ իմպերիալիզմը դառնում է ակտիվ իմպերիալիզմ: Նրանք հասկացան, վոր սկսվել ենոր զոհերի շարքը: Ռազմաճակատը յուրովի յեր արձագանքում ակտիվ իմպերիալիզմի քաղաքականությանը: Մի ամբողջ շարք զնդեր, չնայած արգելանքների, մի շարք քվեարկություններ սկսեցին այն մասին՝

հարձակվե՞լ, թե վոչ: Բարձր հրամանատարությունը չհասկացավ, վոր Ռուսաստանի նոր պայմաններում—և այն ել այն ժամանակ, յերբ պատերազմի նպատակները պարզ չեն—հնարավոր չեմասսաներին կուրորեն հարձակման նետել: Դուրս յեկավ այն, ինչ մենք նախադուչակում եյինք՝ հարձակումը ձախողման եր դատապարտված:

Հունիսի վերջը և հուլիսի սկիզբն անցնում են հարձակման քաղաքականության դրոշի ներքո: Լուրեր են պտտվում մահապատճի վերականգնման մասին, մի ամբողջ շարք զնդերի լուծման մասին, ուղամաճակատում տեղի ունեցող մի ամբողջ շարք ծեծերի մասին: Ռազմաճակատի գելեզատները դալիս և դեկտյունը են իրենց շարքերում տեղի ունեցած ձերբակալությունների, ծեծերի մասին: Այդ նույն բանի մասին են հաղորդում գրենադերական և զնդացրային զնդերից: Այդ ամենը հող պատրիաստեց նոր յելույթի համար:

Եսո անցնում եմ ձեզ համար ամենահետաքրքր քրականին՝ հուլիսի 3—5-ի դեպքերին: Դա հունիսի 3-ի [16] ցերեկվա ժամը 3-ին եր: Կշեմինսկու առանձնարանում այդ ժամանակ տեղի ունեցող համարակային կոնֆերենցիայում քննվում եր մունիցիպալ մի հարց: Անսպասելիորեն ներս են ընկնում զնդացրային զնդերից յերկու դելեզատ, հերթից դուրս հայտարարությամբ՝ «Մեր գունդն ուզում են ցրել, մեղ ծաղը ու ծանակի յեն յենթարկում, մենք այլևս սպասել չենք կարող և վարոշել ենք հոնդես դալ, վորի համար արդեն դործարաններն ու զնդերն ենք ուղարկել մեր դելեզատներին»: Համարակային կոնֆերենցիայի ներկայացուցիչ Վոլոդարսկին հայտնում է, թե կուսակցությունը վորոշել է հանդես չգալ: Կենակոմի համար պարզ եր, վոր և՝ բուրժուազիան, և՝ սեվիչար-

յուրյակայինները կուզենային մեղ յելույթի կոչելց
վորպեսզի հարավորություն ունենան հարձակ-
ման ավանտյուրայի պատասխանատվությունը մեղ
վրա գցելու: Մեղ մոտ վորոշված եր սպասել մին-
չև այն մոմենտը, յերբ կվերջանա հարձակումը
ռազմաճակատում, թողնել, վոր հարձակումն իրեն
խայտառակի մասսաների աշքում, պրովոկացիայի
չենթարկվել և, քանի հարձակումը շարունակվում
է, վոչ մի դեպքում հանդես չդալ, սպասել և թող-
նել, վոր ժամանակավոր կառավարությունն իրեն
սպառի: Ընկ. Վոլոդարսկին դելեզատներին պա-
տասխանեց, վոր կուսակցությունը վորոշում ունի
հանդես չդալ, և իրենց գնդի՝ կուսակցության ան-
դամները պիտի յենթարկվեն այդ վորոշանը;
Գնդի ներկայացուցիչները բողոքելով գնացին:

Ժամը 4-ին Տավրիկյան պալատում Հրավիր-
վում և Կենտկոմի ժողովը: Կենտկոմը վորոշեց հան-
դես չդալ: Կենտդործկոմի բյուրոյի նիստում յես,
Կենտկոմի հանձնարարությամբ, հայտնեցի, վոր
մեր կուսակցությունը վորոշել և հանդես չդալ:
Յես նրանց հայտնեցի բոլոր փաստերը, հաղորդեցի
այն մասին, վոր գնդացրային գնդի դելեզատներն
իրենց դելեզատներին ուղարկել են ֆարբիկաներն
ու գործարանները: Յես բյուրոյին սուաջարկեցի
ձեռք առնել բոլոք միջոցները, վորպեսզի յելույթը
տեղի չըւնենա: Մեր պահանջով այդ արձանագրո-
վեց: Պարոնայք եսերներն ու մենչեւիները, վո-
րոնք այժմ մեղ մեղագրում են յելույթը նախա-
պատրաստելու մեջ, այդ մասին մոռանում են:
Ժամը 5-ին համագալաքային կոնֆերենցիայի մաս-
ները այդ մոմենտին ձեռքերը լվանալ: Այդ վորո-
շումով Կենտկոմն անցնում և Տավրիկյան պալատ,
վորովհետեւ դեպի այնտեղ եցին գնում զինվորներն
ու բանվորները: Այդ ժամանակ տեղի յե ունենում
Խորհրդի բանվորական մասի նիստը: Յելույթ և
ունենում Զինովյելը և հարց ե գնում արդեն
սկսված շարժման մասին: Այդ հանդամանքի ճշն-
ման տակ բանվորական սելցիան վորոշում ե մի-

նարանին մոտենում են 2 գունդ՝ «Ամբողջ իշխա-
նությունը Խորհուրդներին» լողունզերը կրող
դրշակներով: Յելույթ են ունենում յերկու ըն-
կեր՝ Լաշելիչն ու Կուրայելլը: Յերկուսն ել համո-
զում են զինվորներին յելույթ չունենալ և վերա-
դառնալ զորանոցները: Նրանց դիմավորում են
«կորչի» աղաղակով, մի բան, վոր յերբեք չեր
յեղել: Այդ ժամանակ յերեռում ե բանվորների
ցուցը՝ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»
լողունզով: Բոլորի համար պարզ ե դառնում, վոր
յելույթից հետ պահելն անհնարին ե: Այն ժամա-
նակ Պետրոգրադի կոմիտեյի անդամների մասնա-
վոր խորհրդակցությունն արտահայտվում ե հո-
գուտ այն բանի, վորպեսզի միջտմտություն լինի
ցուցըն, զինվորներին ու բանվորներին առաջարկ-
վի գործել կազմակերպված, խաղաղ գիմեն դեպի
Տավրիկյան պալատը, դելեզատներ ընտրեն և նը-
րանց միջոցով հայտնեն իրենց պահանջները: Այդ
վորոշումը զինվորների կողմից ընդունվում ե ծա-
փերի վորոտով և մարտելողով: Մոտ ժամը 10-ին
Կշենինսկու պալատն են հալագվում կենտկոմի
ու համաքաղաքային կոնֆերենցիայի անդամները,
գնդերի ու գործարանների ներկայացուցիչները:
Անհրաժեշտ ե համարվում հարցը նորից վճռել,
միջամտել և զինվորել արդեն սկսված շարժու-
մը: Կուսակցության կողմից հանցագործություն
կլիներ այդ մոմենտին ձեռքերը լվանալ: Այդ վորո-
շումով Կենտկոմն անցնում և Տավրիկյան պալատ,
վորովհետեւ դեպի այնտեղ եցին գնում զինվորներն
ու բանվորները: Այդ ժամանակ տեղի յե ունենում
Խորհրդի բանվորական մասի նիստը: Յելույթ և
ունենում Զինովյելը և հարց ե գնում արդեն
սկսված շարժման մասին: Այդ հանդամանքի ճշն-
ման տակ բանվորական սելցիան վորոշում ե մի-

ջամանել չարժմանը և նրան կազմակերպված բնույթ
տալ, քանի վոր մասսան, վոչ մի զեկալոր ցու-
ցում չունենալով, հեշտությամբ կարող եր պրովո-
կացիայի յենթարկվել: Այդ հարցի շուրջը սեկցիան
պառակալում ե՝ փոքրամասնությունը—½—թող-
նում և նիստը, մեծամասնությունը—²/₃—մնում ե,
ընտրում և 15 հոգուց ժամանակավոր կոմիտե, վո-
րին և Հանձնարարում և գործել: Գիշերվա ժամը
11-ին մոտ աղիտատորներն ու դելեզատները ու-
յոններից հենց այն և վերադառնում են: Քննու-
թյան և դրվում ցույցը հուլիսի 4-ին նշանակելու
հարցը: Ցույց չարքելու վերաբերյալ առաջար-
կությունը, վորպես բացահայտ ուսուպիական,
հոկայական մեծամասնությամբ մերժվում ե: Ա-
մենքի համար պարզ ե, վոր, միննույն ե, յելույթ
կլինի, և կենտկոմը Պետրոգրադի կոմիտեյի հետ
միասին խաղաղ ցույց և նշանակում հուլիսի 4-ին
[17]: Յելույթ չունենալու վորոշման մասին հուլիսի
3-ին [16] ցերեկը «Պրավда»-յին տրված թղթակցու-
թյունը կարվում, գուրս և գցվում, ուրիշ թղթակ-
ցություն հնարավոր չի լինում զետեղել, և 4-ին
[17] «Պրավда»-ն լույս և տեսնում առաջին եջն
սպիտակ: Բաց և թողնվում մի թերթիկ, վորի բո-
վանդակությունը, հավանորեն, բոլորին հայտնի
յե: Ամեն ինչից յերեսում ե, վոր վոչ իշխանության
գրավում եր յենթարկվում, վոչ ել Խորհուրդների
ցրում: Անմիտ, անտրամարանական կլինիք մեզ
մեղադրել նրանում, թե մենք, վոր ցանկանում
եյինք ամբողջ իշխանությունը Խորհուրդներին
հանձնել, զենքը ձեռքներիս ձգտել ենք իշխանու-
թյունը մեր ձեռքը դցել ընդգեմ Խորհուրդների:
Բնորոշ ե, վոր այսպես կոչված հեղափոխական
դեմոկրատիայի ներկայացուցիչներն իրենք են խոս-
տովանում, թե մեր կուսակցությունը մտադիր չի

յեղել ապստամբություն սարքել: Այդ ուղղակի
հայտարարեց Գործադիր Կոմիտեյի ներկայացու-
ցիչ Վոյտինսկին: (Կարդում է «ԱՅ. Ը. Բ. Ա. Ը.
Դեպ.» թերթի հուլիսի 4-ի [17] համարից մի ժաղ-
վածք): Այդ մասին և խոսվում նաև Համառուսա-
կան Համագումարի կողմից զինվորներին ու բան-
վորներին ուղղված կոչի մեջ: Ի միջի այլոց՝ Լենինի
մասին: Նա բացակայում եր, մեկնեց հունիսի 29-ին
[հուլիսի 12-ին] և Պետրոգրադ հասավ միայն հուլիսի
4-ին [17] առավոտյան, այն բանից հետո, յերբ
շարժմանը միջամտելու վերաբերյալ վորոշումն
արգեն ընդունված եր: Մեր վորոշմանը Լենինը
հավանություն տվեց: Դուրս յեկան 500.000-ից
վոչ պակաս: Այն լուրերը, թե ցուցաբարներն ու-
ղեցիկ են ձերբակալել մինիստրներին, նրանց ծեծել
են և այլն, ճիշտ չեն: Թեկուզ մեկ հիմնարկու-
թյուն գրավելու փորձ անդամ չի յեղել, յեթե չը-
հաշվենք խուլիդանական խմբերի ու քրեականների
արարքները: Հուլիսի 4-ին [17], յերբ ցույցը խա-
ղաղ անցնում եր, նեկայի սրբութեատի և Սադովա-
յայի անկյունում սկսվեց ցուցաբարների զնդա-
կոծումը:

Մի ամբողջ շարք դելեզացիաներ իրենց ձառն-
րում հայտնում են, թե ստեղծված գրությունից
դուրս գալու միակ յելքն այն ե, վոր Խորհուրդնե-
րըն իրենց ձեռքը վերցնեն իշխանությունը: Կենտ.
Գործ. Կոմիտեն գրան պատասխանում ե մեր-
ժումով: Դրա հետեւսնգով զինվորների մի մասը
հեռանում ե, իր գործն աշարտված համարելով,
մյուս մասը մնում ե:

Շրջադարձային մոմենտ և հանդիսանում «Լե-
նինի դավաճանության» վերաբերյալ փաստաթըդ-
թերի հրատարակումը: Պարզվեց, վոր ստավկա-
ցում «մատերիալ» յեղել և վաղուց: Դրանից հետո

պարզ յեղակ, վոր փաստաթղթերի հրապարակումով ուղղում եյին զինվորների ցասումն առաջ բերել ընդդեմ բոլցերի հարկերի: Իհարկե, այստեղ պարզապես հույս եյին դրել զինվորների հոգեբանության վրա, զինվորներ, փորոնց վրա ամենից ավելի պիտի ազգեր այն լուրը, թե Լենինը գերմանական շպիոն է: Մինիատր Ծերեթելին զանգահարեց հեռախոսով և խնդրեց չստուգված հաղորդումներ չոպադրել, բայց «Հայու ԸՆՈՒՅՆ»-ն, այնուամենայնիվ, այդ «փաստաթղթերը» հրապարակեց:

Ծերկորդ փաստը ուղղմանակատից ստացված այն լուրերն են, թե սկսվել է մեր ֆրոնտի ճեղքումը, փորի մասին միայն դիմեն Բ. և Զ. Դ. Խորհրդի մղերները: Այդ փաստը լիդերների վրա չչմեցուցիչ տպալորություն թողեց: Այդ կապակցությամբ մենչեւիների ու եսերների վերաբերմունքը դեպի մեզ խիստ փոխվեց: Մարդիկ, վորոնք մեզ հետ խոսում եյին իսրել ընկերներ, հանկարծ մեր դեմ և Տալրիկյան պալատը պահպանելու համար զորք կանչեցին, հեղափոխության դավաճաններ հայտարարելով մեզ: Դեպքերի մեջ իսրայ շրջադարձ կատարվեց, չնայած ցույցը վաղվանից դադարեցնելու վերաբերյալ մեր վորոշմանը:

Հուլիսի 6-ին [19]: Վոչ մի ցույց: Փողոցում հանդիսավոր քայլում են ուղղմանակատից կանչված նոր զորքերը: Պետրոգրադի շրջակայքից կանչված են յունիերները: Փողոցում վիտում են հակահետախուզության աղենաները, ստուգում են անցագրերը և ում հանում՝ ճերբակալում են: 5-ի լույս 6-ի գիշերը մենչեւիներն ու եսերները սիրու են անում զիկտատուրա հայտարարել և բանվորներին ու զինվորներին զինաթափ անել: Վոդեչնչողը, բանից դուրս և զալիս, հանդիսացել

ե Ծերեթելին: Նա զեռ հունիսի 10-ին եր ուղում այդ անել, նրա առաջարկությունը մերժվել եր Մարտովի առաջարկությամբ, վորի հայտարարությամբ ամեն մի հիմար ել կարող ե զենք բանեցնել: Մեր ընկերներ կամենելին ու Զինովյեվը հուլիսի 6-ին լիբերի հետ բանակցում են կուսակցության անդամերին և կուսակցական կազմակերպությունները խուլիդանական հարձակումներից պաշտպանելու մասին, «Правда»-ի խմբադրության վերականգնման մասին և այլն: Բանակցությունները վերջացան մի պայմանագրով, ըստ վորի կշեռինսկու առանձնարանից զրահապատները վերցվում են, կամուրջները իջեցվում են, մնացած նավաստինները վերադառնում են կրօնշտագությունում կամ կառավագանությունում պահպանի այն մասերը, վորոնք մնացել են Պետրոպալովսկի բերդում, անարզել հեռանում են, իսկ կշեռինսկու պալատի մոտ պահակ և դրվում: Բայց պայմանագրիը չկիրառվեց, վորովհետեւ դիկտատուրա հայտարարած կենտր. Գործ. Կոմիտեյի թիկունքում սկսեց գործել զինվորական կլիկան: Այդ պարզ դարձավ բոլորի համար: Պետրովը ուղարկի հրամանատար Կուզմինից առաջարկ եր ստուգի անհապաղ մաքրել կշեռինսկու պալատը: Յես կենտրոնը մեկնեցի գործն առանց արյունհեղության հարթելու առաջարկությամբ: Իմ հարցին, թե՝ ի՞նչ եք ուղում դուք: Մեզ վրա կրակել, մենք Սորուուդների դեմ չենք ապատամում..., բողջանուն ինձ պատասխանեց, թե իրենք ուղում են արյունհեղությունը կանխել: Գնացինք շտարը: Զինվորականները մեզ ընդունեցին վոչ բարեկամաբար, ասում եյին, թե հրամանն արդեն տրված է յեղել: Յես այն տպագործությունն ստացա, թե այդ պարուները, ինչ ել փոքի, ուղում են արյուն թափել:

Ահա այն դերը, վոր մեր կուսակցությունը
խաղաց այդ որերին:

Կուսակցությունը չեր ուզում յելույթ ունե-
նալ, կուսակցությունն ուզում եր սպասել, մինչև
վոր ուղմաճակատում հարձակման դիմելու քա-
ղաքականությունը վարկաբեկվի: Այսուամենայ-
նիվ տարերային յելույթը, վոր հարուցվել եր յեր-
կրում տիրող քայլայումով, կերենսկու հրաման-
ներով, զորամասերը Փրոնտ ուղարկելով, տեղի
ունեցավ, և կուսակցությունը, չցանկանալով ան-
ցորդի դերք բռնել, իր պարտքը համարեց միջա-
մտել շարժմանը:

Այդ ի՞նչ մասսայական կուսակցություն է,
վոր անցնում ե մասսաների շարժման կողքով: Մեր
կուսակցությունը միշտ գնացել ե մասսաների հետ:
Ծերեթելին և ուրիշները, վորոնք մեղ մեղադրում
են նրանում, թե մենք միջամտեցինք շարժմանը,
դրանով իսկ ստորագրում են իրենց մահվան դա-
տավճիռը: Խոսում են արյունհեղության մասին,
բայց արյունհեղությունն ավելի սարսափելի
կլիներ, յեթե կուսակցությունը յելույթին չմիջա-
մտեր: Նա կարգավորիչի դեր խաղաց:

Ահա բոլորը, ինչ յես ուզում եմ ասել Կենտ-
կոմի քաղաքական գործունելության մասին:

Մեր կուսակցությունը միակ կուսակցությունն
եր, վոր մնաց մասսաների հետ՝ հակահեղափո-
խության դեմ մղված նրանց սլայքարում, և մենք
ամեն ինչ արինք ստեղծված դրությունից սրաւ-
վով դուրս գալու համար: (Ծափահարություն-
ներ):

ՅԵԶԻՒ.ՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Հնկերներից վոչ վոք կենտկոմի քաղաքական
դիմք չքննադատեց, հսկողներից վոչ վոք բուն

լոգունդները չբողոքարկեց: Կենտկոմն առաջարկել
ե յերեք հիմնական լոգունդ՝ ամբողջ իշխանու-
թյունը Խորհուրդներին, վերահսկողություն ար-
տադրության վրա և կարվածատիրական հողերի
կոնֆիսկացիա: Այդ լոգունդները համակրանք
վաստակեցին բանվորական մասսաների և զինվոր-
ների մեջ: Այդ լոգունդները ճիշտ դուրս յեկան, և
մենք, այդ հողի վրա պայքարելով, մասսաներին
չկորցրինք: Այդ յես համարում եմ հիմնական
փաստը, վորը խոսում է հոգուտ կենտկոմի: Յեթե
կենտկոմն ամենադժվար մոմենտներին ճիշտ լո-
գունդներ և տալիս, կնշանակի հիմնականում նա
երավացի յե:

Քննադատությունը չոշափեց վոչ թե հիմնա-
կանը, այլ յերկրորդականը: Քննադատությունը
հանգեց այն բանի մատնանշմանը, թե կենտկոմը
չի կապվել պրովինցիայի հետ և նրա գործունելու-
թունը յերեան ե յեկել զլխավորապես Պետրոգրա-
դում: Պրովինցիայից կտրված լինելու վերաբերյալ
կշտամբանքը զուրկ չե հիմքից: Բայց վոչ մի
հնարավորություն չկար ընդգրկել բոլոր յելույթ-
ները: Այս կշտամբանքը, թե կենտկոմը փաստորեն
զարձել ե Պետրոգրադի կոմիտե, արդարացի յե
մասամբ: Այդ այդպես ե: Բայց այստեղ, Պետրո-
գրադումն ե զարբնվում Ռուսաստանի քաղաքա-
կանությունը: Այստեղ ե հեղափոխության բա-
րանը (տարան): Պրովինցիան արձագանդում ե այն
բանին, ինչ վոր կատարվում ե Պետրոգրադում:
Այդ բացատրվում ե նրանով, վոր այստեղ ե ժա-
մանակավոր կառավարությունը, վորն իր ձեռ-
քումն ե կենտրոնացնում ամբողջ իշխանությունը:
Այստեղ ե կենտրոնացնում վորպես ամբողջ կազմա-
կերպված հեղափոխական դեմքը կրատիրացի ձայն:



Մյուս կողմից, գեղքերը գլորվում են, տեղի ունի խոռվար, վորեւ հավաստիք չկա, թե գոյություն ունեցող իշխանությունը հենց վաղը չի թուշի: Այդ պայմաններում սպասել, թե մեր ընկերները պրովինցիայից յերբ կմիանան մեզ հետ, անմիտ կլիներ: Հայտնի յե, վոր կենտղործկոմը հեղափոխության հարցերը վճռում ե առանց պրովինցիային հարցնելու: Նրանց ձեռքումն ե վողջ կառավարական ապարատը: Իսկ մե՞զ մոտ: Միակ բարանը հեղափոխական բանվորն ե և զինվորը: Յեվ կենտկոմից պահանջել, վորպեսզի նա վոչ մի քայլի չձեռնարկի, նախապես չհարցնելով պրովինցիային, կնշանակի պահանջել, վորպեսզի կենտկոմը գնա վոչ թե դեպքերի առջելից, այլ հետեւից, և իր բանաձեռում միայն արձանագրի արդեն կատարված փաստերը: Բայց դա կենտկոմ չեր մնի: Միայն այն մեթոդով, վորով մենք դեկավարվել ենք, կարողացանք մնալ գրության բարձրությանը:

Յեղան մասնավոր բնույթի կշռամբանքներ: Ընկերները խոսեցին հուլիսի 3—5-ի ապստամբության անհաջողության մասին: Այո՛, ընկերներ, այդ անհաջողություն եր, բայց դա վոչ թե ապրատամբություն եր, այլ ցույց: Ֆրոնտի ճեղքումը և պարտությունից վախեցած մանրբութուական կուսակցությունների, եսերների ու մենչեկների կուսակցությունների դավաճանական փարմունքը, կուսակցություններ, վորոնք իրենց թիկունքը դարձրին դեպի հեղափոխությունը, բացատրում են հեղափոխության անհաջողությունը, և վոչ թե մեր կուսակցության անհաջողությունը: Ընկ. Բեղրաբոտնին ասում եր, թե կենտկոմը չաշխատեց

Պետրոգրադն ու պրովինցիան հեղեղել հուլիսի 3—5-ի դեպքերը պարզաբանող թուցիկներով: Բայց մեր տպարանը տակն ու վրա յեր արված, և Փիզիկական վոչ մի հնարավորություն չկար վորեկ բան տպագրելու այլ տպարաններում, քանի վոր դա տպարաններին քարուքանդ լինելու վտանգ եր սպառնում:

Բայց և այնպես գործը այստեղ այնքան ել վատ չեր, յեթե վորոշ թաղամասերում մեզ ձերբակալում եյին, ապա ուրիշ թաղամասերում մեզ վողջույններով ու արտասովոր խանդավառությամբ եյին դիմավորում: Յեվ այժմ Պիտերի բանվորների տրամադրությունն սքանչելի յե, բոլշևիկների պրեստիժը՝ մեծ:

Յես կուզենայի մի շարք հարցեր դնել: Նախ, ինչպես պետք ե մենք վերաբերվենք զրպարտությանը: Վերջին ժամանակվա դեպքերի կապակցությամբ անհրաժեշտ ե կազմել ամբողջ բնակչությանն ուղղված մի մասնիկում՝ պարզաբանելով բոլոր դեպքերը, վորի համար հարկավոր ե հանձնաժողովը ընտրել: Յեվ հենց այդ հանձնաժողովին, յեթե գուք նրան կընտրեք, յես առաջարկում եմ հրատարակել Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և այլն հեղափոխական բանվորներին ու զինվորներին ուղղված մի կոչ՝ հուլիսի 3—5-ի դեպքերի վերաբերյալ ինֆորմացիայով: Մենք պրոլետարիատի ամենաառաջավոր մասն ենք, մենք պատասխանատվություն ենք կրում ամբողջ հեղափոխության համար: Մենք պետք ե դեպքերի մասին ճշմարտությունն ասենք: Յերկրորդ ընկերներ լենինի և Զինովյեվի՝ իշխանություններին ներկայանալուց խուսափելու մասին: Տվյալ մոմենտում դեռ ևս պարզ չե, թե ում ձեռքին ե իշխանությունը: Յերաշխիք չկա, վոր, յեթե նրանց ձերբակալեն, նրանք չեն յենթարկ-

մի կոպիտ բռնության։ Այլ բան ե, յեթե դատը պե-
մոկրատականորեն կազմակերպված լինի, և յերաշ-
խիք արվի, վոր նրանց չեն հոչոտի։ Այդ հարցին
կենտործկոմում մեզ պատասխանեցին. «Մենք չգի-
տենք, թե ինչ կարող ե պատահել»։ Դրությունն
առաջմ չի պարզվել, դեռևս խուլ պայքար տեղի
ունի պաշտոնական իշխանության և փաստական իշ-
խանության միջև, ընկերների՝ իշխանություննե-
րին ներկայանալը վոչ մի միտք չունի։ Յեթե գլուխ
կանդնի այնպիսի իշխանություն, վորը կարողանա-
յերաշխավորել մեր ընկերներին բռնություններից,
ապա նրանք կներկայանան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։
ԶԵԿՈՒՑՈՒՄ Ռ. Ս.-Դ. Բ.(Բ)Կ.
VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Ագաստոսի 12 (հուլիսի 30)

Արդի մոմենտի վերաբերյալ հարցը մեր հեղա-
փոխության բախտի վերաբերյալ հարցն ե, այն ու-
ժերի վերաբերյալ հարցը, վորոնք շարժում են հե-
ղափոխությունը և այն ուժերի, վորոնք փորում են
նրա տակը։

Ինչի՞ց սկսվեց հեղափոխությունը։ 4 ուժերի՝
պրոլետարիատի, գյուղացիության, լիբերալ բուր-
ժուազիայի և դաշնակցային կապիտալի կուլտիւ-
րից։ Ինչո՞ւ պրոլետարիատը հեղափոխության եր
գնում։ Վորովհետեւ նա ցարիզմի մահացու թշնա-
մին ե։ Ինչո՞ւ յեր գնում գյուղացիությունը։ Նա
վստահում եր պրոլետարիատին, և նա հողի ծարավ
եր։ Ինչո՞ւ յեր գնում լիբերալ բուրժուազիան։
Վորովհետեւ պատերազմի ընթացքում նա հիա-
սթափվեց ցարիզմից։ Նա կարծում եր, թե ցարիզմը
իրեն նոր յերկրներ գրավելու հնարավորություն
կտա։ Հույս չունենալով ներքին շուկայի տարողու-
թյան մեծացման վրա, նա ընտրեց ամենաթույլ
դիմադրության ուղին՝ արտաքին շուկայի լայնաց-
ման ուղին։ Բայց նա սխալվեց։ ցարիզմն ու իր
զորքերը չկարողացան նույնիսկ պահպանել սահ-
մանները, և 15 նահանդ տրվեցին հակառակորդին։
Այսուղից ել լիբերալ բուրժուազիայի դավաճա-
նությունը ցարիզմին։ Իսկ դաշնակցային կապի-

տա՞լը։ Նա Ռուսաստանի վրա նայում եր, իբրև
իր իմպերիալիստական նպատակների համար մի
ոժանդակ ձեռնարկության վրա։ Մինչդեռ ցարիզ-
մը, վոր առաջին յերկու տարում Փրոնտի միաս-
նության պահպանման հույս եր տալիս, սկսել եր
թեքվել դեպի սեպարատ հաշտությունը։ Այստեղից
ել՝ դաշնակցային կապիտալի դավաճանությունը
ցարիզմին։

Յարիզմը մեկուսացված գտնվեց և կամաց ու
հանդիսատ մեռավ։

Փետրվարյան հեղափոխության այդ չորս ու-
ժերը, վորոնք միասին եյին զնացել, տարբեր նպա-
տակներ ունեյին։ Լիբերալ բուրժուազիան և դաշ-
նակցային կապիտալը փոքրիկ հեղափոխություն
եյին ուղղվմ մեծ պատերազմի համար։ Բայց բան-
վորների ու գյուղացիների մասսան հեղափոխու-
թյան եր զնում վո՛չ դրա համար։ Նրանք այլ նպա-
տակներ ունեյին։ 1) վերջ տալ պատերազմին և
2) պարտության մատնել կալվածատերերին ու
բուրժուազիային։

Ահա հեղափոխության հակասության հիմքե-
րը։

Ապրիլի 20—21-ի ճշնաժամն այդ հակասու-
թյունների առաջին արտահայտումն եր։ Միլյու-
կովը փորձ ե անում պասսիվ իմպերիալիզմը դարձ-
նել ակտիվ իմպերիալիզմ։ Մասսայական շարժման
հետեանքով ստացվեց կոալիցիոն կառավարու-
թյուն։ Կոալիցիայի սկզբունքը, ինչպես փորձը
ցույց տվեց, — բուրժուազիայի ձեռքին ամենալավ
միջոցն ե նրա համար, վորպեսզի հիմարացնի մաս-
սաներին և շարունակի նրանց իր հետեւից տանել։
Կոալիցիոն կառավարության կազմակորման մո-
մենտեց սկզբեց հականեղափոխության մորիլիզա-
ցիան վերևից ու ներքեից։ Մինչդեռ պատերազմը

շարունակվում ե, տնտեսական քայլայումն աճում
է, հեղափոխությունը շարունակվում ե, ավելի ու
ավելի սոցիալիստական բնույթ ստանալով։ Հեղա-
փոխությունը ներխուժում ե արտադրության վո-
լորտը—հարց ե դրվում վերահսկողության մասին։
Հեղափոխությունը ներխուժում ե գյուղատնտեսա-
կան վոլորտը—հարց ե դրվում վո՛չ միայն հողի
կոնֆիսկացիայի մասին, այլև կենդանի ու մեռյալ
ինվենտարի կոնֆիսկացիայի մասին։ Քանի վոր
բոլշևիկները հանդիսանում եյին պրոյետարական
հեղափոխության մունետիկները, նրանք ճիշտ բնո-
րոշեցին նրա բնույթը։ Նրանք, վորոնք առաջար-
կում եյին սահմանափակվել հեղափոխական
նվաճումների ամրացումով, հեղափոխականներ չե-
ցին։ Համաձայնողականության ուղին, վոր ընտրել
եյին մենքներն ու եսերները, անդորրության եր
մատնված։ Վոչ մի ուժ չկար, վոչ մի հնարավո-
րություն չկար հեղափոխությունը կես ճանապար-
հին կանգնեցնելու։ Այսպիսով, այն փաստը, վոր
մեզ մոտ հեղափոխությունը զարգանում ու առաջ
եր գնում, մեզ հրում եր բուրժուական հեղափո-
խության վրայով զեպի սոցիալիստական հեղա-
փոխությունն անցնելու անհրաժեշտության ուղին։

Վորոշ ընկերներ ասում եյին, թե քանի վոր
կապիտալիզմը մեզ մոտ թույլ ե զարգացած, ապա
ուսուպիկական ե հարց գնել սոցիալիստական հեղա-
փոխության մասին։ Նրանք իրավացի կլինեյին,
յեթե չլիներ պատերազմը, յեթե չլիներ քայլայու-
մը, ժողովրդական տնտեսության հիմքերը խախտ-
ված չլինեյին։ Բայց տնտեսական վոլորտում
միջամտելու վերաբերյալ այդ հարցերը դրվում են
բոլոր պետություններում, իբրև անհրաժեշտ հար-
ցեր։ Այդ հարցը Գերմանիայում դրված ե և գլուխ
բերվեց առանց մասսաների ուղղակի և ակտիվ

մասնակցության։ Այլ բան ե մեղ մոտ՝ Ռուսաստանում։ Մեզ մոտ քայլայումն ավելի աճեղ չափեր ե ընդունել։ Մյուս կողմից, այնպիսի ազատություն, ինչպիսին մեղ մոտ ե, պատերազմի պայմաններում վոչ մի տեղ չի յեղել։ Այնուհետև, բանվորների վիթխարի կազմակերպվածությունը. մեղ մոտ, որինակ՝ Պիտերում 66% կազմակերպված մետաղագործներ են։ Վերջապես, վոչ մի տեղ պրոլետարիատը չի ունեցել այնպիսի լայն կազմակերպություններ, ինչպես Բ. և Զ. Դ. Խոդուրդներն են։ Այս ամենը բացառում եր տնտեսական կյանքում բանվորական մասսաների չմիջամտելու հնարավորությունը։ Դրանումն ե մեղ մոտ՝ Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության վերաբերյալ հարցադրման ռեալ հիմքը։ Վորչափով վոր բանվորները ակտիվորեն միջամտում են վերահսկողության, փոխանակման պրոցեսի կազմակերպանը, այնչափով մեղ մոտ գործնականութեն դրվում ե սոցիալիստական հեղափոխության վերաբերյալ հարցը։ Ենք այդ պատճառով, ընկերներ, այդ կետի գեմ առարկողներն իրավացի չեն։

Քանի վոր հեղափոխությունն այնքան շատ առաջ դնաց, նա չեր կարող չհարուցել հակահեղափոխականների զգոնությունը, նա պիտի ծներ հակահեղափոխություն։ Դա հակահեղափոխության մորթիկացին առաջինն ե։

Յերկրորդ գործոնը ավանդուրան ե, վոր ծայր ե առել ռազմաճակատում հարձակում սկսելու քաղաքականությամբ, և ռազմաճակատի մի ամբողջ շարք ճեղքվածքները, վորոնք իշխանությանը զրկեցին ամեն տեսակ պրեստիժոց և թեավորեցին հակահեղափոխությունը, վորն այդ իշխանության վրա զրոհի դիմեց։ Լուրեր են պտըռվում, թե մեղանում պրովոկացիայի մի շրջան ե

սկսվել լայն մասշտաբով։ Ռազմաճակատից յեկած դելեղատները գտնում են, վոր և հարձակումը, և նահանջը, —մի խոսքով՝ այն ամենը, ինչ տեղի յե ունեցել ռազմաճակատում, նախապատրաստված ե նրա համար, վորպեսզի կարելի լինի խայտառակել հեղափոխությունը և տապալել «հեղափոխական» մինիստրությունը։ Յես չգիտեմ՝ այդ ճիշտ ե թե վոչ, բայց ուշադրավ ե, վոր հուլիսի 2-ին [15] կաղետները կառավարությունից հեռացան։ 3-ին սկսվում են հուլիսյան դեպքերը, իսկ 4-ին տեղեկություններ են ստացվում ռազմաճակատի ճեղքման մասին։ Ասել, թե կաղետները հեռացան Ուկրաինայի վերաբերյալ հարցի լուծման պատճառով, չի կարելի. կաղետները հայտարարում եյին ուկրաինական հարցի լուծման անհրաժեշտության մասին։ Կա նաև յերկրորդ փաստը, վոր խոսում ե այն մասին, թե իրոք սկսվել ե պլովիկացիայի շրջան։ յես խոսում եմ Ուկրաինայում տեղի ունեցած փոխհաճածդության մասին։ Այդ փաստերի կապակցությամբ ընկերների համար պարզ պիտի լինի, վոր ռազմաճակատի ճեղքումը մեկն եր այն փաստերից, վորոնք մանր-բուրժուական լայն մասաների աչքում պիտի ճախողելին հեղափոխության գաղափարը։

Կա նաև յերրորդ գործոնը, վորն ուժեղացրեց հակահեղափոխական ուժերը Ռուսաստանում։ դա գաշնակցային կապիտալն ե։ Յեթե դաշնակցային կապիտալը տեսնելով, վոր ցարիզմը զնում ե զեղի սեպարատ հաշտություն, զավաճանեց Նիկոլայի կառավարությանը, ապա նրան վոչ վոք չի խանգարում կապը խղել ներկա կառավարության հետ, յեթե վերջինս անընդունակ գտնվի պահպանելու «միասնական» ճակատը։ Միլյուկովը նիստերից մեկում ասաց, թե միջազգային շուկայում Ռուսաս-

տանը գնահատվում է իրեւ մարդ մատակարարող և դրա համար փող և ստանում: Յեզ յեթե պարզ վեց, վոր նոր իշխանությունը, ի գեմս ժամանակավոր կառավարության, անընդունակ է Գերմանիայի վրա հարձակվելու միասնական ճակատին ոժանդակելու, ապա և չարժե այդպիսի կառավարությանը սուբսիդիա տալ: Իսկ առանց փողի, առանց վարկի, կառավարությունը պիտի տապալվեր: Դրանումն է զաղտնիքը, վոր ճգնաժամի եպոնայում կաղետները հոկայական ուժ ստացան: Իսկ կերենսկին և բոլոր մինիստրները կաղետների ձեռքին խաղալիք դարձան: Ինչո՞ւմն է կաղետների ուժը: Նրանում, վոր նրանց ոժանդակում երդաշնակցային կապիտալը:

Ռուսաստանի առաջ կար յերկու ուղի:

Կամ պատերազմը դադարեցվում է, քանդվում են իմպերիալիզմի հետ բոլոր ֆինանսական կապերը, հեղափոխությունը չարժվում է առաջ, խախտվում են բուրժուական աշխարհի հիմքերը, և սկսվում է բանվորական հեղափոխության դարաշրջանը.

Կամ մյուս ուղին, պատերազմը շարունակելու ուղին, շարունակել հարձակումը, յենթարկվել դաշնակցային կապիտալի և կաղետների բոլոր հրամաններին, —և այն ժամանակ ֆինանսական լիակատար կախվածություն դաշնակցային կապիտալից (Տավրիկյան պալատում վորոշակի լուրեր են յեղել, թե Ամերիկան 8 միլիարդ կտա, տնտեսությունը վերականգնելու միջոցներ կտա) և հակա-հեղափոխության հաղթանակ:

Յերրորդ ուղի չի կարող լինել, յերրորդը չի արված:

Եսերների ու մենչեիկների փորձը, հուլիսի 3—4-ի յելույթը, բավորների յելույթը, վորոնց

Համբերությունը հատել է այլևս կրելու կապիտալի քաղաքականությունը, ցույց տալ իրեւ զինված խոռվություն—պարզապես ծիծաղելի յեւ:

Յեթե խոսենք մեղավորների մասին, ապա պիտի նկատի ունենանք որյեկտիվ պայմանները. 1) Հեղափոխության զարգացումը սոցիալիստականի, 2) Փրոնտի ձեղքումը, վոր մանր բուրժուազիային ցույց տվեց կուալիցիոն կառավարության անպետքությունը և 3) Պաշնակցային կապիտալը, վոր չի ցանկանում սուբսիդիա տալ հեղափոխությանը: Այդ ուժերի շարքում բանվորների յելույթը մի փոքրիկ կետ է, վորը չեւ ել նկատի: Յելույթի միակ մեղավորը հանդիսանում է այն, վոր հակահեղափոխությունը վկտիացել է: Մենչեկիկներն ու եսերներն սկսեցին հարվածել դեպի ձախ, բոլույթիկներին, դրանով իսկ մերկացնելով հեղափոխական ճակատը և իրենց ու մեզ դերի տալով հակա-հեղափոխականներին: Հուլիսի 3-ին մենք առաջարկում եյինք հեղափոխական ճակատի միասնությունընդում հակահեղափոխության: «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» մեր լողունզն ել նշանակում է—ստեղծել միասնական հեղափոխական ճակատ: Բայց նրանք, վախենալով, թե կկտրվեն բուրժուազիայից, մեզնից յերես թեքեցին, վորով հեղափոխական ճակատը ջարդվեց ի հաճույյ հակահեղափոխականների: Յեթե խոսենք հակահեղափոխության մեղավորների մասին, ապա մեղավորները հանդիսանում են եսերներն ու մենչեկիկները, հեղափոխության դավաճանները: Յեթե հարցնենք, թե ինչո՞ւմն է կաղետների ուժը, վորոնք կարենետներում նստած, իրենց դիրեկտիվներն եյին հրատարակում կենտղործկոմի համար, վորտեղ նրանք քաղում եյին իրենց ուժը, ապա մեկ պատասխան կարող է լինել. դաշնակցային կապիտալի

մեջ, նրանում, վոր Ռուսաստանը փողի կարիք ունի, կարիք ունի ներքին փոխառության, վոր բուրժուազիան չի տալիս, կամ ապահովված արտաքին փոխառության, վոր չի տալիս դաշնակցային կապիտալը, վորովհետև նրան դուր չի գալիս կոալիցիոն կառավարության քաղաքականությունը: Հակահեղափոխական բուրժուազիան, դաշնակցային կապիտալը և հրամանատարական կազմի վերնախավերը—ահա հակահեղափոխության յերեք հենարանները: Մեր դժբախտությունն այն է, վոր Ռուսաստանը մանր-բուրժուական յերկիր է, նա գնում է կաղետների հետ համաձայնության յեկող եսերների ու մենչեւիների հետեւց, ու մինչեվ այն մոմենտը, քանի դեռ գյուղացիությունը չի հիասթափվի վերնախավերի և ներքնախավերի համաձայնության քաղաքարից, մենք պիտի տանջվենք, և հեղափոխությունը պիտի ձախողվի:

Բայց հեղափոխության ստորերկրյա ուժերը չեն նիրհում. քանի պատերազմը շարունակվում է, քանի քայլքայումը շարունակվում է, փոք մի ուղրեսիա, վոչ մի մահապատիժ, մոսկովյան վոչ մի խորհրդակցություն կառավարությանը չեն փրկի նոր պայթյուններից: Գյուղացիությունը հող չի ստանա, բանվորը արտադրության նկատմամբ վերահսկողություն չի ստանա, զինվորը կվերադարձվի դեպի նախկին ստրկությունը: Ռազմաճակատից յեկած գելեցատները հաղորդում են, թե զինվորների մեջ արյունալի գատաստանի միտք է հասունանում, և, քանի դեռ հակահեղափոխությունը հաղթող հանդիսանա, նոր պայթյուններն ու նոր մարտերը բացարձակապես անխուսափելի յեն: Յեվ յեթե հակահեղափոխականներին հաջողվի մեկ-յերկու ամիս դիմանալ, ապա միայն այն պատճառով, վոր կոալիցիայի սկզբունքը վերացված չե:

Ի՞նչ բան ե Ժամանակավոր Կառավարությունը: Դա մի խաղալիք է, դա մի խղճուկ վրմա յե, վորի հետեւում կանգնած են կաղետները, զինվորական կլիկան և դաշնակցային կապիտալը—հակահեղափոխության յերեք հենարանները: Յեթե «սոցիալիստական» մինիստրները կառավարության մեջ չլինեյին, թերեւ հակահեղափոխականներն արդեն տապալված կլինեյին: Բայց մոմենտի բնորոշ գիծն այն է, վոր հակահեղափոխական ձեռնարկումները «սոցիալիստների» ձեռքով են անցկացվում: Միայն այդպիսի շիրմա ստեղծելով կարող է հակահեղափոխությունը մի յերկու ամիս ել գոյություն ունենալ: Բայց քանի զարգանում են հեղափոխության ուժերը, պայթյուններ կլինեն, և կղա մի մոմենտ, յերբ բանվորները վոտքի կհանեն ու իրենց շուրջը կհամախմբեն գյուղացիության չքավոր խավերին, կբարձրացնեն բանվորական հեղափոխության դրոշը և բաց կանեն սոցիալիստական հեղափոխության երան Արևմուտքում: (Կարդում ե բանաձելը):

Յես կուզեյի բանաձեւում մի տեղ պարզաբնել. մինչեւ հուլիսի 3-ը հնարավոր եր խաղաղ հաղթանակ, իշխանության խաղաղ անցումը Խորհուրդներին: Յեթե Խորհուրդների համագումարը վորոշեր իշխանությունը վերցնել իր ձեռքը, յես կարծում եմ, կաղետները չեյին համարձակվի բացահայտորեն դուրս գալ Խորհուրդների դեմ, վորովհետեւ այդպիսի յելույթը նախապես դատապարժած կլիներ կործանման: Բայց այժմ, այն բանից հետո, յերբ հակահեղափոխությունը կաղմակերպվել ու ամրացել է, ասել, թե Խորհուրդները կարող են խաղաղ ճանապարհով իշխանու-

Թյունն իրենց ձեռքը վերցնել, —կնշանակի իսուսել դուք տեղը: Հեղափոխության խաղաղ ժամանակաշրջանը վերջացավ, հասել ե վոչ-խաղաղ ժամանակաշրջանը, կոփմների բռնվելու և պայթյունների ժամանակաշրջանը...

ՊԱՏՍՍԽԱՆՆԵՐ ՍՅՆ ՀԱՐՑԵՐԻՆ,
ՎՈՐ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՇՈՒՐՋԸ ԱՌԱ-
ԶԱԴՐԵԼ ԵՆ ՄԻ ԽՈՒՍՔ ԴԵԼԵԳԱՏՆԵՐ

Ազգային 13 (հայիսկ 31)

Առաջին կետի վերաբերյալ՝ «Մարտական կազմակերպության ի՞նչպիսի ձեւ ե առաջարկում զեկուցողը Բանվորական Դեպուտատների Խորհուրդների փոխարքեն», յես կապատասխանեմ, վորհարցի գրումը ճիշտ չե: Խորհուրդների, վորագեսքանվոր դասակարգի կազմակերպության ձեի, դեմ յես դուրս չեմ յեկել, բայց լոգունդը փորոշվում է վոչ թե Հեղափոխական Հիմնարկության կազմակերպման ձեռով, այլ այն բովանդակությամբ, վորը կազմում ե տվյալ Հիմնարկության միսն ու արյունը: Յեթե կադետները մտնելին Խորհուրդների կազմի մեջ, մենք յերբեք իշխանությունը նրանց հանձնելու վերաբերյալ լոգունդ առաջ չեմ քաշի:

Այժմ մենք իշխանությունը պրոյետարիատի ու չքավորագույն դյուղացիության ձեռքը հանձնելու լոգունդ ենք առաջ քաշում: Հետեաբար, հարցը վոչ թե ձեի մեջ ե, այլ նրանում, թե վո՞րդասակարգին ե հանձնվում իշխանությունը, հարցը Խորհուրդների կազմի մեջ ե:

Խորհուրդը հանդիսանում ե բանվոր դասակարգի կողմից իշխանության համար մղվող պայքարի կազմակերպման ամենանվատակահարմար

ձեզ, բայց Խորհուրդները հեղափոխական կազմակերպության միակ տիպը չեն: Այդ ձեզ զուտ ոռուսական ե, արտասահմանում այդ դերում մենք տեսնում ենք մունիցիպալիտետները՝ ֆրանսական Մեծ Հեղափոխության ժամանակ, կենտրոնական կոմիտե՝ կոմունայի ժամանակ, հենց մեզ մոտ ել միտք եր խմորվում Հեղափոխական կոմիտեյի վերաբերյալ: Թերեւս բանվորական սեկցիան ամենից հարմարեցված ձեզ կհանդիսանա հանուն իշխանության մղվող պայքարի համար:

Բայց պետք ե մեզ պարզ հաշվի տանք, վոր ձեփ վերաբերյալ հարցը չե վճռականը հանդիսանալու:

Իրոք վճռականը հանդիսանում ե այն հարցը, թե հասունացե՞լ ե, արդյոք, բանվոր դասակարգը դիկտատուրայի համար, իսկ մնացած բոլորը կհարմարվի, կստեղծվի հեղափոխության ստեղծագործությամբ:

Յերկրորդ և յերրորդ կետերի վերաբերյալ, — պրակտիկորեն ի՞նչպես կկազմավորվի մեր վերաբերմունքը դեպի գոյություն ունեցող Խորհուրդները, — պատասխանը միանգամայն պարզ ե: Վորչափով վոր խոսքը վերաբերում ե ամբողջ իշխանությունը կենտրոնական Գործադիր կոմիտեյին հանձնելուն, ապա այդ լոգունքը հնացած ե: Յեվ միմիայն խոսքը դրան ե վերաբերում: Խորհուրդների տապարման վերաբերյալ հարցը մտացածին ե: Այդ հարցն այստեղ վոչ վոչ չի դրել: Յեթե մենք առաջարկում ենք հանել «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» լոգունքը, այստեղից տակապին չի բղխում՝ «Կորչեն Խորհուրդները»: Յեվ մենք, վոր այդ լոգունքը հանում ենք, միևնույն ժամանակ դուրս չենք գալիս նույնիսկ կենտրոնական Գործադիր կոմիտեյից, չնայած

վերջին ժամանակներս նրա ամբողջ խղճուկ դերին:

Տեղական Խորհուրդները զեռ կարող են զերխաղալ, քանի վոր նրանց անհրաժեշտ կլինի ժամանակավոր կառավարության վոտնաձգություններից պաշտպանվել, և այդ պայքարում մենք նրանց կոժանդակենք: Յեվ այսպէս, կրկնում եմ՝ իշխանությունը Խորհրդի ձեռքը հանձնելու լոգունգի վերացումը չի նշանակում «Կորչեն Խորհուրդները»: «Մեր վերաբերմունքը դեպի այն Խորհուրդները, վորտեղ մենք մեծամասնություն ենք կազմում», — ամենաբարյացակամ ե: Թող ապրեն և ամրանան այդպիսի խորհուրդները: Բայց ուժը արդեն Խորհուրդների մեջ չե: Առաջ ժամանակավոր կառավարությունը դեկրետ եր հրատարակում, իսկ Գործադիր կոմիտեն՝ կոնտրդեկրետ, ընդդուրում միայն վերջինն եր որենքի ուժ ստանում: Հեշտեցեք №1 Հրամանի պատմությունը: Իսկ ոյժմ ժամանակավոր կառավարությունը հաշվի չի տում կենտրոնական Գործադիր կոմիտեյին: Խորհրդի մասնակցությունը հուլիսի 3—5-ի դեպքերի վերաբերյալ քննչական հանձնաժողովում Խորհրդի կողմից չի բացվեց, բայց չկայացավ կերենսկու Հրամանով: Այժմ հարցը վոչ թե Խորհուրդներում մեծամասնություն նվաճելու մեջ ե, վորն ինքնին շատ կարենոր ե, այլ հակահեղափոխությունը ջնջելու մեջ :

Չորրորդ կետի վերաբերյալ — «Հքավորագույն գյուղացիություն» հասկացողության ավելի կոնկրետ ընորոշման մասին — յես կազմակերպման ձեռ նշելու մասին — յես կապատասխանեմ, վոր «Հքավորագույն գյուղացիություն» տերմինը նոր տերմին չե: Այն մտցված ե մարքսիստական գրականության մեջ ընկ. Լենինի կողմից հինգ թվա-

կանից և այն ժամանակվանից դործ եր ածվում «Правда»-յի գրեթե ամեն մի համարում և տեղ ե գտել ապրիլյան կոնֆերենցիայի բանաձեռքում:

Դյուզացիության չքավորագույն խավերը—արդ նրանք են, վորոնք տարածայնվում են դյուզացիական վերնախավերի հետ։ Դյուզացիական Դեպուտատաների Խորհուրդը, վոր «ներկայացնում ե» 80 միլիոն դյուզացի (հաշվելով նաև կանանց), հանդիսանում «ե դյուզացիական վերնախավերի կազմակերպությունը։ Դյուզացիական ներքնախավերը կատաղի պայքար են մղում «խորհրդային» քաղաքականության դեմ։ Մինչդեռ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության դեկավար Զերնովը, այնուհետև Ավքսենայեվսն ու մյուսները դյուզացիներին առաջարկում են հողն անհապաղ չվերցնել, այլ սպասել հողային հարցի ընդհանուր լուծմանը Սահմանադիր ժողովի կողմից, ի պատասխան դրան դյուզացիները վերցնում են հողը, հերկում են, վերցնում են ինվենտարը—և այլն։ Այդպիսի տեղեկություններ մենք ունենք Պենզայի, Վորոնեժի, Վիտեբսկի, Կազանի և մի շարք այլ նահանգներից։

Հենց միայն դա պարզ ցույց ե տալիս դյուզի շերտավորումը ներքնախավերի ու վերնախավերի, ցույց ե տալիս, վոր դյուզացիությունը, վորպես մի միասնական ամբողջություն, այլևս գոյություն չունի։ Վերնախավերը դլասվորապես զնում են սոցիալ-հեղափոխականների հետեից, ներքնախավերն ի վիճակի չեն առանց հողի առլրելու և ոպոզիցիոն դիրք են բռնել ժամանակավոր կառավարության հանդեպ։ Դրանք հողասակավներն են, մեկ ձի ունեցողները, ձիազուրկները և այլն։ Դրանց են հարում նաև կիսապրոլետարական շերտերը, վորոնք գրեթե զրկված են հողից։

Խելացի չեր լինի չփորձել հեղափոխական ժամանակաշրջանում վարոշ համաձայնության դաշտ գյուղացիության այդ խավերի հետ, բայց միենույն ժամանակ անհրաժեշտ և չքավորագույն գյուղացիության շերտերին առանձին կազմակերպել, պլուտոսարքների շուրջը համախմբել նրանց։

Թե ինչպիսին կլինի այդ շերտերի կազմակերպման ձևը—դժվար ե նախագուշակել։ Այժմ դյուզացիական ներքնախավերը կազմակերպվում են կամ վորպես ինքնազլուխ Խորհուրդներ, կամ աշխատում են զավթել արդեն գոյություն ունեցողները։ Այսպես, Գետերբուրգում $1\frac{1}{2}$ ամիս առաջ չքավորագույն դյուզացիներից (80 զինվորային ժամանակավոր ներկայացուցիչներից և գործարաններից կազմակերպվեց խորհուրդ), վորը կատաղի պայքար և մղում Դյուզացիական Դեպուտատաների Խորհրդի քաղաքականության դեմ։

Ընդհանրապես Խորհուրդներն ամենանպատակահարմար ձևն են հանդիսանում, բայց մենք պետք ե խոսենք վոչ թե հիմնարկությունների լեզվով, այլ մատնանշենք դասակարգային բովանդակությունը. պետք ե ձգտենք այն բանին, վորպեսի ժամանակավոր նույնպես տարբերեն մեր բովանդակությունից։

Ընդհանրապես տասած, ձևերի վերաբերյալ հարցը հիմնականը չե։ Կլինի հեղափոխական վերելք—կտուեղծվեն նաև կազմակերպական ձևերը։ Թող ձևերի վերաբերյալ հարցը չվարագուրի հիմնական հարցը, թե վո՞ր դասակարգի ձեռքը պիտի անցնի իշխանությունը։

Մեղ համար այսուհետև անկարելի յե պաշտպանողականների հետ ըլոկը։ Պաշտպանողական կուսակցություններն իրենց բախտը կապել են բուրժուազիայի հետ, և բլոկի իդեան սկսած սոցիալ-

Հեղափոխականներից մինչև բոլշևիկները խորտակը մտն յենթարկվեց: Պայքար ընդդեմ Խորհուրդների վերնախավերի, գյուղացիության չքավորագույն շերտերի հետ դաշնակցած և հակառեղափոխության ջնջում—ահա հերթական հարցը: (Մաֆահարություններ):

ՅԵԶՈՒՍՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Ընկերներ, ամենից առաջ յես միքանի փառտացի ուղղումներ պիտի մտցնեմ:

Ընկ. Յարութավակին, հերքելով իմ այն պնդումը, թե ոռուսաստանյան պրոլետարիատն ամենից ավելի կազմակերպված է, մատնանշում և ավտրիական պրոլետարիատին, բայց, ընկերներ, յես խոսում եյլ «կարմիր» կազմակերպվածության մասին, և նման կազմակերպվածություն վոչ մի յերկրում չկա այն չափով, ինչպես ոռուսաստանյան պրոլետարիատի մոտ:

Ընկ. Անգարսկին բոլորովին իրավացի չե, մատնանշելով, վոր իրը թե յես բոլոր ուժերի միավորման իդեան եմ անցկացնում: Բայց մենք չենք կարող չտեսնել, վոր տարբեր դրդապատճառներով, վոչ միայն գյուղացիությունն ու պրոլետարիատը, այլև ոռուսական բուրժուազիան ու արտասահմանյան կապիտալը ցարկովից յերես են թեքել: Դա փաստ է: Հավ չե, յեթե մարքսիստները փաստերի առաջ փաս են լինում:

Բայց հետո առաջին յերկու ուժերը կանգնեցին հեղափոխության բանակում, յերկրորդները—հակառեղափոխության:

Անցնում եմ ըստ եյության: Հարցը բոլորից լուրջ դրվեց ընկ. Բուխարինի կողմից, բայց և նա այն չհասցը մինչև վերջը: Ընկ. Բուխարինը պընդում է, թե բուրժուատիմ պերիալիստը մուժիկի հետ

բլոկ է կնքել: Բայց վո՞ր մուժիկի հետ: Մեզ մոտ տարրեր մուժիկներ կան: Աջերի հետ բլոկ կազմված է, բայց մեզ մոտ կան ներքնախավ մուժիկներ, վորոնք ներկայացնում են գյուղացիության չքավորագույն չերտերը: Ահա հենց նրանց հետ ե, վոր այդ բլոկը չեր կարող լինել: Նրանք խոշոր բուրժուազիայի հետ բլոկ չեն կազմել, բայց նրա հետեւից գնում են անդիտակցաբար, նրանց պարզապես խարում, տանում են իրենց հետեւից:

Ընկ ո՞ւմ գեմ ե բլոկը:

Ընկ. Բուխարինն այդ չասաց: Այդ գաջնակցային և ոռուսական կապիտալի, հրամանատարական կազմի և գյուղացիական վերնախավերի, ի դեմո Զերնովի տիպի սոցիալիստ-հեղափոխականների բլոկն է: Այդ բլոկը կազմավորվեց գյուղացիության ներքնախավերի հաշվին, բանվորների հաշվին:

Վո՞րն ե ընկ. Բուխարինի հեռանկարը: Նրա վերլուծությունը հենց հիմքից ճիշտ չե: Նրա կարծիքով, առաջին ետապում մենք գնում ենք գեղի գյուղացիական հեղափոխություն: Բայց չե վոր այդ հեղափոխությունը չի կարող չհանդիպել, չհամընկնել բանվորական հեղափոխության հետ: Չի կարող պատահել, վոր հեղափոխության ավանդությունը կազմող պրոլետարիատը միևնույն ժամանակ չպայքարի իր սեփական պահանջների համար: Ուստի ընկ. Բուխարինի սխեման յես համարում եմ չմտածված:

Յերկրորդ ետապը ըստ ընկ. Բուխարինի—պրոլետարական հեղափոխությունն ե Արևմտյան Յեղրոպայի սժանդակությամբ առանց գյուղացիների, վորոնք հողն ստացել ու բավարարվել են: Բայց ո՞ւմ գեմ ե ուղղված այդ հեղափոխությունը: Ընկ. Բուխարինն իր խաղալիքային սխեմայում դրան պատասխան չի տալիս: Ինչ վոր կատարվում է, դրա

վերլուծության նկատմամբ այլ մոտեցում առաջարկված չի յեղել:

Մինչեւ դրությունը պարզ է: Այժմ յերկիշ խանության մասին վոչ վոչ չի խոսում: Յեթե Խորհուրդները առաջ ունեալ ուժ եյին ներկայացնում, ապա այժմ դրանք մասսաների համախմբմբ ման սոսկ որդաններ են, վորոնք վոչ մի իշխանություն չունեն: Հենց այդ պատճառով ել հնարավոր չե «պարզապես» իշխանությունը նրանց հանձնել: Ընկ. Լենինն իր բրոցյուրում ավելի հեռու յե գնում, վորոշակի մատնանշելով, թե յերկիշխանություն չկա, քանի վոր ամբողջ իշխանությունն անցել է կապիտալի ձեռքը, և այժմ առաջադրել «Ամրողջ իշխանությունը Խորհուրդներին» լողուշը—նշանակում ե գոնքիշոտությամբ զբաղվել:

Յեթե առաջ առանց Գործադիր Կոմիտեյի սանկցիայի վոչ մի որենք ուժ չուներ, ապա այժմ յերկիշխանության մասին խոսակցություն անդամ չկա:

Զալթեցեք այժմ բոլոր Խորհուրդները, իշխանությունը ձերը չի՝ լինի:

Ռայոննական դումաների ընտրությունների ժամանակ մենք կազետներին ծաղը ու ծանակի եյինք յենթարկում, վորովհետեւ նրանք ներկայացնում եյին ամենախղճուկ խումբը, վորը ձայների 20% ստացավ: Այժմ նրանք են մեզ ծաղը ու ծանակի յենթարկում:

Ինչո՞ւմն և բանը: Նրանում, վոր Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի թողարկությամբ իշխանությունն անցագ բուրժուազիայի ձեռքը:

Ընկերներն իշխանության կազմակերպման հարցում շատպում են: Բայց չե՞ վոր գուք դեռ իշխանություն չունեք:

Դիմավոր խնդիրն ե—գոյություն ունեցող իշ-

խանության տապալման ահրաժեշտության դադարի պրոպագանդան: Այդ մտքի համար մենք դեռ բավականաչափ նախապատրաստված չենք: Բայց պետք ե նախապատրաստվել:

Հարկավոր ե, վորպեսզի բոլոր բանվորները, գյուղացիները և զինվորները հասկանան, թե առանց ներկա իշխանությունը տապալելու նրանք չեն ստանա վոչ աղատություն, վո՞չ հոդ:

Յեկայսեր, հարցը դրվում ե վոչ թե իշխանության կազմակերպման մասին, այլ նրա տապալման մասին, իսկ յերբ մենք իշխանությունը կառնենք մեր ձեռքը, մենք կկարողանանք այն կազմակերպել:

Այժմ միքանի խոսք ընկերներ Անդարսկուն և Նողինին՝ սոցիալիզմի առթիվ: Դեռ ապրիլյան կոնֆերենցիայում մենք ասում ենք, թե հասել ե մոմենտը, վորպեսզի սկսենք քայլեր անել դեպի սոցիալիզմը (կարդում ե ապրիլյան կոնֆերենցիայի՝ «Ընթացիկ մամենակ մասին» քանակնի վերջը):

«Թուսաստանի պրոլետարիատը, վոր գործում ե Յեվրոպայի ամենահետամնաց յերկրներից մեկում, բնակչության մանրգյուղացիական մասսայի մեջ, չի կարող իր առաջ սոցիալիստական վոխակերպումների անհապաղ կենսագործման նպատակ դնել:

Բայց ամենամեծ սխալը կմներ, իսկ գործնականում՝ նույնիսկ լրիվ անցում բուրժուազիայի կողմը, յեթե այստեղից յեղբակացություն արվեր, թե անհրաժեշտ ե, վոր բանվոր դասակարգն ողնի բուրժուազիային կամ անհրաժեշտ ե սեփական գործունեյությունը սահմանափակել մանր բուրժուազիայի համար ընդունելի վզջանակներով, կամ հրաժարումն պրոլետարիատի զեկավար դերից՝ դեպի սոցիալիզմ մի շարք գործնականորեն հա-

սունացած քայլերի անհետաձղելիությունը ժողովը բարդին պարզաբանելու գործում»:

Ընկերները յերեք ամսով հետ են մնացել: Իսկ ի՞նչ կատարվեց այս յերեք ամսվա ընթացքում: Մանր բուրժուազիան շերտավորվեց, ներքնախավերը հեռանում են վերնախավերից, պրոյետարիատը կազմակերպվում ե, քայլայումն աճում ե, ավելի համառորեն հերթի դնելով բանվորական վերահսկողության կենսագործման հարցը (որինակ՝ Պիտերում, Դոնեցի մարզում և այլն): Ամեն ինչ ընթանում ե հոգուստ այն դրույթների, վոր ընդունված են դեռ ապրիլին: Իսկ ընկերները հետ են քաշում:

Այժմ Խորհուրդների մասին: Այն փաստով, վոր մենք Խորհուրդների իշխանության վերաբերյալ առաջվա լողունգը հանում ենք, մենք դուրս չենք գալիս ընդդեմ Խորհուրդների: Ընդհակառակը, կարելի յե և պետք ե աշխատել Խորհուրդներում, նույնիսկ կենտրոնական Գործադիր Կոմիտեյում՝ հակահեղափոխության քողարկման որդանում: Թեպետ Խորհուրդներն այժմ մասսաների համախմբման որդաններ են սոսկ, բայց մենք միշտ մասսաների հետ ենք և Խորհուրդներից չենք հեռանա, մինչև այստեղից մեզ դուրս չվռնդեն: Զե՞ վոր մենք մնում ենք և՝ Փարբիկա-գործարանային կոմիտեներում, և՝ մունիցիալիտետներում, թեկուզ նրանք իրենց ձևոքում իշխանություն չունեն: Բայց, մնալով Խորհուրդներում, մենք շարունակում ենք սոցիալիստ-հեղափոխականների ու մենց ևիկների տակտիկան դիմակաղերծ անել:

Այն բանից հետո, յերբ հակահեղափոխությունը լիակատար ակնհայտությամբ բացահայտեց մեր բուրժուազիայի կապը դաշնակցային կապիտալի հետ, ե'լ ավելի ակնառու դարձավ այն, վոր մեր

հեղափոխական պայքարում մենք պետք ե հենվենք յերեք գործոնների՝ ոռուսաստանյան պրոլետարիատի, գյուղացիության և միջազգային պրոլետարիատի վրա, քանի վոր մեր հեղափոխության բախտը սերտորեն կապված է արևմտա-յելրոպական շարժման հետ: (Ծափահարություններ):

ԱՌԱՐԿՈՒՄ

ՅԵ. ՊՐԵՇՐԱԺԵՆՍԿՈՒՆ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԶԵԿՈՒԹՅՄԱՆ ԱՌԹԻՎ ԱՐԱՋԱՐԿՎԱԾ
ԲԱՆԱՁԵՎԻ 9-ՐԴ ԿԵՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Աղոստակի 16 (3)

ՀԱԿԵՐ ՍՏՈՎԻՆ

Կարդում և բանաձեկի թրդ կետը.

«9. Այն ժամանակ այդ հեղափոխական դասակարգերի* խնդիրը կհանդիսանա բռլոր ուժերի լարումը պետական իշխանությունն իր ձեռքը վերցնելու համար և, առաջազոր յերկրների հեղափոխական պրոլետարիատի հետ դաշնակցած, այդ իշխանությունը դեպի խաղաղություն և դեպի հասարակության սոցիալիստական վերակառուցում ուղղելու համար»։

Պրեոքրաժենսկի: Առաջարկում եմ բանաձեկի վերջի, այլ խմբագրություն։ «Նրան դեպի խաղաղություն և, Արևմուտքում պրոլետարական հեղափոխության առկայության դեպքում, դեպի սոցիալիզմ ուղղելու համար»։ Յեթե մենք ընդունենք հանձնաժողովի խմբագրությունը, ապա տարածայնություն կստացվի ընկ. Բուխարինի արգեն ընդունված բանաձեկի հետ։

* Պրոլետարիատի և քաղաքի ու գյուղի չքայլության և նմբ։

ՀԱԿԵՐ ՍՏՈՎԻՆ

Յես դեմ եմ բանաձեկի այլպիսի ավարտմանը։ Բացառված չե այն հնարավորությունը, վոր հենց Ռուսաստանը հանդիսանա դեպի սոցիալիզմը ուղի հարթող յերկիրը։ Մինչեւ այժմ վոչ մի յերկիր չի ողովել այնպիսի ազատությունից, ինչպիսին Ռուսաստանում ե յեղել, չի փորձել արտադրության վրա բանվորական վերահսկողությունն իրագործել։ Բացի դրանից, մեր հեղափոխության բազան ավելի լայն ե, քան Արևմտյան Յեվրոպայում, վորտեղ պրոլետարիատը կանգնած ե բուրժուազիայի հետ դեմ-հանդիման լիովին միայնակ։ Մեզ մոտ բանվորներին ոժանդակում են գյուղացիության չքայլորագույն շերտերը։ Վերջապես, Գերմանիայում պետական իշխանության ապարատն անհամեմատ ավելի լավ է գործում, քան մեր բուրժուազիայի անկատար ապարատը—բուրժուազիա, վորն ինքն ել հանդիսանում ե յեվրոպական կապիտալի հարկատուն։ Հարկավոր ե զեն շարտել դարն անցկացրած պատկերացումն այն մասին, թե միայն Յեվրոպան կարող ե մեզ ճանապարհ ցույց տալ։ Գոյություն ունի գողմատիկ մարքսիզմ և ստեղծագործական մարքսիզմ։ Յես կանգնած եմ վերջինիս հողի վրա։

ՆԱԽԱԳԱԽԻ

Պրեոքրաժենսկու ուղղումը դնում եմ քվեարկության։

Մերժվում ե։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը ՌՍԴԲ(բ)Կ VI համագումարին	3
Քաղաքական դրության մասին: Զեկուցում ՌՍԴԲ(բ)Կ VI համագումարում	21
Պատասխաններ այն հարցերին, վոր զեկուցման շուրջը առաջադրել են մի խումբ դելեզատ- ներ	31
Առարկում ՅԵ. Պրեոքրաժենսկուն «Քաղաքա- կան դրության մասին» զեկուցման առթիվ առաջարկված բանաձևի 9-րդ կետի վերա- բերյալ հարցի շուրջը	42

Թարգմանեց Բ. Ն. Դավթյան

Հայերն թարգմանության խմբագիր Ա. Կ. Առաքելյան
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեցյան
Կոնտրոլ ուղարգիչ Լ. Արայիան

Դրավիճակ լիազոր № Կ-2459, հրատ. № 660

Պատվեր № 58, տիրաժ 10.000,

Թղթի չափավ 59×83¹/₁₆ (32.500 տպ. նիշ 1 տպ. մամուկում)

3 տպ. մամուլ 1¹/₂ թիրթ թուղթ

Հանձնված ե արտադրության 7/III 1939 թ.


Առողջության ապագրելու 31/III 1939 թ.

Գինը 50 կ.

Գեանլատ—Քաղաքական դրականության

հրատարակության ապարան,

Տեղան, Ալլանվերդյան № 65



ՀՀ Ազգային գրադարան

NL0927961

28343

9-бъл 50 ч
11 МАЯ 1939

И. В. СТАЛИН

РЕЧИ НА VI СЪЕЗДЕ РСДРП (б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван 1939